Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ ԿԳՄՄՆ «Երևանի հ8 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի «Փայտամշակման արտադրությունների սարքավորումների շահագործում և տեխնոլոգիա» /1.0 դրույք/ «Ատաղձագործական,մանրահատակագործական,ապակեգործական աշխատանքներ»/1.0 դրույք/ մասնագիտությունների արտադրական ուսուցման վարպետների և «Հանրահաշիվ» /տարեկան ծանրաբեռնվածությունը՝ 252 ժամ/ ու «Երկրաչափություն» /տարեկան ծանրաբեռնվածությունը՝ 238 ժամ/ առարկաների դասախոսի՝ թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է բանավոր՝ հարցազրույցի միջոցով:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել.

- դիմում (Ձև 1),
-կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը և պատճենը),
- անձնագիր (բնօրինակը և պատճենը),
- աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձև 4),
- մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
- այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները ՝ նաև զինվորական գրքույկ (բնօրինակը և պատճենը),
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում):

Մրցույթին կարող է մասնակցել այն անձը, ով համապատասխանում է տվյալ մասնագիտության պետական կրթական չափորոշչով սահմանված պահանջներին:

Փաստաթղթերն ընդունվում են մինչև 2024թ. հոկտեմբերի 15-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:30-16:00, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2024թ. հոկտեմբերի 17-ին՝ ժամը 12:00-ին «Երևանի հ8 արհեստագործական պետական ուսումնարանում» հասցե՝ ք.Երևան, Բուռնազյան 143:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010)-47-17-31, (010)-47-17-32, (098) 96-86-50: